

Արագածոտնի մարզի «Նոր
Երզնկայի միջնակարգ դպրոցի»

Պետական ոչ առևտրային
կազմակերպություն

2023-2028 թվականների զարգացման ծրագիր

Դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի
հավակնորդ՝ Երագիկ Համլետի
Մեսրոպյան



Զարգացման ծրագրի բովանդակությունը

Ներածություն.	3
1. Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց <<ՊՈԱԿ>>-ի գործունեությունը.	5
1. 1. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը.	8
1. 2. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր.	12
2. Նոր Երզնկայի միջնակարգ դպրոցի <<ՊՈԱԿ>>-ի շենքային պայմանները, կյուլթատեխնիկական բազան	13
3. Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ.	21
4. Դպրոցի համագործակցությունը համայնքի կրթության կառավարման մարմնի շահառու կազմակերպությունների հետ.	25
5. Դպրոցի ուսումնական միջավայրը.	30
5. 1. Ներառական կրթության և հավասարության իրականացումը դպրոցում.	31
6. Ուսումնական հաստատության մանկավարժական համակազմի զարգացմանն ապահովող միջոցառումներ.	33
7. Հաստատության տրամադրած կրթության որակը.	38
8. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները.	47
9. Դպրոցի արտաքին միջավայրի վերլուծություն.	49
10. Հաստատության աշխատանքների որակը՝ որպես ուսուցիչների ձեռքբերումների արդյունք.	50
11. Հաստատության գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները.	55

12. Չարգացման ծրագրերի իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցության ուղղված գործողությունները.	55
13. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները, Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները, Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ.	56
12. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքներ.	98
13. Ծրագրի գնահատման չափանիշները և վերահսկողությունը.	100
14. Եզրափակում.	102

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակ, Նոր Երզնկա բնակավայր 2փ. 2 47

Հեռախոսահամար 0232-3-57-49

Էլ. հասցեն norerznka@schools.am , Ինտերնետային կայքի հասցեն
<http://norerznka.schoolsaite.am>

Սույն զարգացման
ծրագիրը կազմվել է
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
<<22>> սեպտեմբերի 2022թ.
<<Պետական հանրակրթական
ուսումնական հաստատության
զարգացման ծրագրի մշակման
ձևաչափը և զարգացման ծրագրի
կատարման ամենամյա հաշվետվության
կատարողական ցուցանիշներն ու պահանջները
N35-ն հրամանի
պահանջներին
համապատասխան

Ներածություն

Արագածոտնի մարզի «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակված է «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի» 12-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագրի մեթոդաբանական հիմքերն են.

1. Դպրոցի նախորդ տարիների ներքին գնահատման հաշվետվությունները:
2. Հայաստանի Հանրապետության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը:
3. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:
4. Դպրոցի կանոնադրությունը:
5. Մանկավարժական համակազմի ձեռքբերումները:
6. Դպրոցում առկա հիմնախնդիրները:

Սույն զարգացման ծրագիրը նախասահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական, կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված դպրոցի ինքնազարգացման ներուժը և Նոր Երզնկա բնակավայրի կարիքները:

Դպրոցի առաքելությունն է

Քաղաքակիրթ, ստեղծագործող, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացու ձևավորումը:

Ծրագրի ռազմավարական ուղղություններն են.

1. Ներառական, սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում:
2. Կրթության արդյունավետության բարձրացում:

Ծրագրի հիմքում դրվել են հետևյալ արժեքային սկզբունքները.

1. Ժողովրդավարական, մասնակցային մշակույթի ձևավորում:
2. Մարդակենտրոնություն յուրաքանչյուր որոշում կայացնելիս:
3. Դպրոցի ինքնավարության, ակադեմիական ազատությունների, հանրային հաշվետվողականության ու թափանցիկության ապահովում:

1. «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի « Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական մեկ կամ մի քանի ընդհանուր՝ այդ թվում հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնք, Նոր Երզնկա 2փ,2. 47:

Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Դպրոցն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում է դպրոցի նախահաշիվը, ֆինանսական հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերի հայտարարությունները և այլ տեղեկություններ:

Դպրոցն ըստ կրթական մակարդակների իրականացնում է 1-ին / 1-4-րդ դասարաններ/, 2-րդ / 5-9-րդ դասարաններ/ և 3-րդ / 10-12-րդ դասարաններ/ աստիճանի հանրակրթական ծրագրեր:

Լիցենզիա-N0286 տարրական ընդհանուր՝ առաջին աստիճան հանրակրթական ծրագրերի իրականացում.

N0281 հիմնական ընդհանուր՝ երկրորդ աստիճան հանրակրթական ծրագրերի իրականացում.

N0227 միջնակարգ ընդհանուր՝ երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրերի իրականացում:

Դպրոցում աշխատում է 23 ուսուցիչ

Դպրոցի աշակերտների թիվը՝ 247

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից

Ճնողական խորհուրդը կազմված է 12 անդամից

Աշակերտական խորհուրդը 14 անդամից:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով սահմանված իրենց իրավասության սահմաններում: Դպրոցը գործում է 1 հերթով, 5օրյա աշխատանքային ռեժիմով:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: Ապահովել այնպիսի ուսումնառության համակարգ, որը համապատասխանում է պետական պահանջներին և սովորողներին ապահովում է անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, արժեքային համակարգով ու որակներով՝ միաժամանակ հնարավորություն ընձեռնելով նրանց սովորելու ամբողջ կյանքի ընթացքում:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավստահության, ազգային և համամարդկային արժեքների զարգացման սկզբունքի վրա:




Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցը


Ուսուցման և դաստիարակության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել

- համակողմանիորեն զարգացած
- քաղաքացիական գիտակցությամբ օժտված
- մասնագիտորեն կողմնորոշված
- հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված

- ինքնասպասարկման ունակություններ ունեցող
- ինքնուրույն կյանքին պատրաստ քաղաքացի:

Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար





1. յուրաքանչյուր սովորողի կրթության ակցիայի հնարավորություն

2. հանրակրթության պետական չափորոշիչներ, հանրակրթական պետական ծրագրերին համապատասխան ուսուցման արդյունավետ ձևերի և մեթոդների ընտրություն

3. յուրաքանչյուր սովորողի ֆիզիկական մատչելիությունն ապահովող հարմարեցված միջավայր

4. մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում

Հաստատությունն իրականացնում է 1-4-րդ դասարանների սովորողների սննդի կազմակերպում, նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների անվտանգ կենսագործունեության, առողջ ապրելակերպի կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Իրականացնում է սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ: Սովորողների կրթական կարիքների լիարժեք ապահովմանը խոչընդոտ է հանդիսանում անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը՝ լաբորատորիաներ, արհեստանոցներ, առարկայական կաբինետներ, լրացուցիչ դասասենյակներ կիսվող դասասրահների համար, բուժկետ:

Հաստատության մարդկային ռեսուրսները նույնպես չեն համապատասխանում հաստատության գործունեությանը: Այգեպանի կարիք ունի հաստատությունը կանաչ տարածքների խնամքի, մշակման համար:

Հաստատության համար խիստ կարևոր է նաև բուժքույրի հաստիքը սովորողներին, աշխատողներին առաջին օգնություն ցուցաբերելու, գրիպի, այլ շնչառական հիվանդությունների վարակի կանխարգելման աշխատանքների իրականացման համար:

1. 1 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունն իրականացվում է սահմանված կարգով:

Ֆինանսատնտեսական գործունեությունն իրականացվում է հստակ ու թափանցիկ: Ֆինանսատնտեսական եռամսյա հաշվետվությունները քննարկվում են կառավարման խորհրդում, տեղադրվում են դպրոցի կայք էջում և մարզպետարանի կայք էջում: Յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջեի նախագիծը քննարկվում է դպրոցի մանկավարժական, աշակերտական, ծնողական խորհրդի նիստերում, կազմակերպվում է հանրային լսումներ: Ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կառավարման խորհրդի կողմից քննարկվում և հավանության է արժանանում բյուջեի նախագիծը և ներկայացվում լիազոր մարմնի հաստատման:

Բյուջեի ծախսերի ուղղություններն են

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ
- կոմունալ վճարներ
- գրասենյակային, տնտեսական ապրանքներ
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- հատուկ նպատակային ծախսեր
- տեղեկատվական ծառայություն
- կենցաղային և հանրային սնունդ
- ներքին գործուղումներ:

2019թ. հունվարից մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխություն է կատարվել. `

3-րդ տարակարգ 119880 դրամի փոխարեն դարձել է 131868 դրամ,

2-րդ տարակարգ 122040 դրամի փոխարեն` 134244 դրամ

1-ին տարակարգ 125280 դրամի փոխարեն` 137808 դրամ:

2023թ հունվարից ուսումնասօժանդակ աշխատակազմի աշխատավարձը 87974 դրամի փոխարեն դարձել է 95625 դրամ:

2021-2023թթ ֆինանսական ցուցակների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեկան բյուջեի միջոցները հիմնականում բավարարում են աշխատավարձին և կոմունալ ծախսերին:

Սակայն դպրոցը խնայողությունների միջոցով իրականացրել է թե՛ վերանորոգման աշխատանքներ, և՛ թե՛ գույքի ձեռքբերում:

2020թ. -հանդերձարանների և սանհանգույցների վերանորոգում:

2021թ- սանհանգույցների վերանորոգում

2022թ-մարզադահլիճի և ճաշարանի վերանորոգում

2022թ- էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում:

Դպրոցի առկա և ձեռքբերված գույքը հաշվառված է, յուրաքանչյուր տարի կատարվում է գույքագրում:

Ուսումնական հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշների ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշներ	2020-2021	2021-2022	2022-2023	Փոփոխությունների դինամիկան /աճ կամ նվազում/
Սովորող/ուսուցիչ հարաբերությունը /հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին/	13,6	12,1	11,4	Նվազում
Սովորող/սպասարկող անձնակազմ հարաբերությունը /հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը	7	14,6	13,9	Նվազում

սպասարկող անձնակազմի ընդհանուր թվին/				
Դասարանների միջին խտությունը /հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը կոմպլեկտավորված դասարանների ընդհանուր թվին/	21,4	21,9	20,9	Նվազում
Մեկ սովորողի հաշվով հաստատության նախահաշիվը /հաշվարկ. հաստատության տարեկան բյուջեով հաստատված ամբողջ գումարի հարաբերությունը հաստատության սովորողների ընդհանուր թվին/	225,1	207,7	278,9	աճ
Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը	82,9	82,9	91,5	աճ
Ուսուցիչների միջին աշխատավարձը	115,6	120,9	134,3	աճ
Վարչական աշխատողների միջին աշխատավարձը	121,3	152,7	258,4	աճ

Տվյալներ հաստատության բյուջետային միջոցների վերաբերյալ

	2020	2021թ	2022թ
Հաստատության տարեկան հաշվում արտա- բյուջետային միջոցների չափը /հաշվարկ. հաստատության տարեկան բյուջեում արտաբյուջետայի միջոցների չափի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ/	-	-	-
Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը	-	-	-

Չովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը /հաշվարկ. ծնողների կողմից տարվա կտրվածքով կատարած ներդրումների, դրամաշնորհների և հաստատության տարեկան բյուջեում/	%	-	-
Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը /հաշվարկ. աշխատավարձերի վճարման հոդվածով՝ ներառյալ հարկերը, հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ/	87,7	69,5	85,4
Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը /հաշվարկ. կոմունալ վճարների հոդվածով հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ/	4,5	4,9	5,4
Նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռք բերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը /հաշվարկ. գույքի ձեռք բերման հոդվածով հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ/	2,8	-	2,7

1. 2 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով.

- Կրթության մասին ՀՀ օրենքով
- Հանրակրթության մասին ՀՀ օրենքով

- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքով
- ՀՀ աշխատանքային օերնագրքով
- Դպրոցի կանոնադրությամբ
- Իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով
- Ներքին իրավական ակտերով
- Նորմատիվ փաստաթղթերով

Դպրոցին վերաբերվող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումն իրականացվում է սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան, ներդպրոցական վերահսկողության պլան, որոնք կազմվում են հիմք ընդունելով դպրոցի զարգացման ծրագիրը և ներքին գնահատման հաշվետվությունները:

Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր /օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն/:

Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրության համապատասխան մշակված ձևաթղթեր, ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու, ՈՒԹՀՎ վերլուծության նպատակով:

Դպրոցի գործունեության փաստաթղթերի զգալի մասը թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարել Էլեկտրոնային՝ դասամատյաններ, աշխատողի անձնական գործ, սովորողի անձնական գործ, միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան, հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան Էլեկտրոնային հաստիքացուցակ, տարիֆիկացիոն մատյան և այլն: Հաստատությունում վարվում է նաև ուսուցիչների բաց թողած և փոխարինած դասաժամերի հաշվառման մատյանը, մանկավարժական խորհրդի, կառավարման խորհրդի, ծնողական խորհրդի, աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյանները: ուսումնական առարկաների թեմատիկ պլանները, դասացուցակը ներմուծվում է emis համակարգ:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը, տնօրենի տեղակալի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, առարկայական մեթոդական միավորումների նախագահների, դասղեկների աշխատանքային պլանները մուտքագրվում են հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանի դպրոցի թղթապանակում:

2. «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան

1. Նոր Երզնկայի միջնակարգ դպրոցը կառուցվել է 1968 թվականին: Շենքի ընդհանուր տարածքը 1718,5 քմ: Դպրոցն ունի երկու մասնաշենք:

Առաջին մասնաշենքը երկհարկանի է: Մասնաշենքի առաջին հարկում գտնվում են 1-5-րդ դասարանների դասասենյակները, ուսուցչանոցը, գրադարանը, տնօրենի սենյակը, ընդունարանը և տղաների ու աղջիկների սանհանգույցները:

Երկրորդ հարկում գտնվում են համակարգչային դասասենյակը, «Արմաթ» ինժինեռական լաբորատորիան, զենքի պահեստը, լաբորատորիան, 6-12-րդ դասարանների դասասենյակները, որոնցից հինգը 52,5քմ տարածք ունի յուրաքանչյուրը, մեկ դասասենյակը 26,5քմ:

Առաջին և երկրորդ հարկերի բոլոր լուսամուտները վերանորոգված են, երկրորդ հարկի 6 դասասենյակներում և ինժինեռական լաբորատորիայում, ֆիզիկայի լաբորատորիայում կատարված են արտաքին հարդարման աշխատանքներ: Առաջին հարկում գտնվող տղաների և աղջիկների սանհանգույցները հիմնանորոգված են:

Առաջին մասնաշենքում հիմնանորոգման կարիք ունեն բոլոր տարածքների փայտե հատակը, դասասենյակները, գրադարանը, տնօրենի սենյակը, ուսուցչանոցը:

Երկրորդ մասնաշենքում են գտնվում մառանը, խոհանոցը, ճաշարանը, հանդիսությունների դահլիճը, արհեստանոցը, մարզադահլիճը, տղաների և աղջիկների հանդերձարանները ներքին սանհանգույցներով, աշխատողների համար նախատեսված սանհանգույցը, որոնք հիմնանորոգված են, բացառությամբ արհեստանոցի և հանդիսությունների սրահի:

Դպրոցը ցանկապատված է: Ունի ընդարձակ բակ, կանաչապատ տարածք, այգի, մարզադաշտ: Դպրոցին կից գտնվում է կաթսայատունը: Դպրոցի ցանկապատն ունի վերանորոգման կարիք, իսկ բակը՝ ասֆալտապատման:

Ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և ինտերնետ կապի համակարգով: Շենքի մուտքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժն ապահովող պայմաններով՝ մուտքի աստիճաններին թեքահարթակ, երկփեղկ դռներ:

Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, շուրջօրյա հոսող խմելու ջրով, սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով:

Հաստատության շենքային ոչ բավարար պայմանների պատճառով առաջանում են որակյալ կրթության կազմակերպման համար որոշակի դժվարություններ

1. դասասենյակներից երկուսը չեն համապատասխանում սանիտարական նորմերին
2. դասասենյակների ոչ բավարար քանակը խոչընդոտում է կիսվող դասաժամերի իրականացմանը
3. շախմատի դասաժամերը կազմակերպվում է գրադարանում
4. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատելու համար չկա անհրաժեշտ տարածք՝ ռեսուրս սենյակ բազմամասնագիտական խմբի աշխատանքների իրականացման համար
5. հաստատությունը չունի քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության կաբինետներ
6. դպրոցը չունի ռազմագիտության դասասենյակ, հրաձգարան
7. չկա պահակների, սպասարկման աշխատողների համար առանձնասենյակ
8. դպրոցը չունի ապաստարան:

Նյութատեխնիկական բազա

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը նպաստում է նաև նյութատեխնիկական բազան:

Հաստատության բոլոր դասասենյակներում առկա են համապատասխան քանակի սեղան-նստարաններ, պահարաններ, գրատախտակներ, ուսուցչի սեղաններ և աթոռներ: Տնօրենի սենյակը, ուսուցչանոցը ապահովված են անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Մարզադահլիճը համալրվել է նոր գույքով և սարքավորումներով: Համակարգչային կաբինետում առկա է 6 պլանշետներ, էլեկտրոնային գրատախտակ, պրոյեկտոր, 9 համակարգիչներ, որոնցից աշխատում են 4-ը: Համակարգչային դասասենյակը կարիք ունի նոր սերնդի համակարգիչների կամ նոթբուքերի:

Գրադարանը կարիք ունի նոր գույքի՝ պահարաններ, գեղարվեստական դասական գրականության, համակարգչի, հարմարավետ աթոռների և սեղանների:

Քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության դասաժամերի հետաքրքիր և արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ են լաբորատոր նյութեր և սարքավորումներ:

Տեխնոլոգիայի դասաժամերի համար անհրաժեշտ են նոր սարքավորումներ՝ հաստոցներ, կարի մեքենաներ:

Տարածք	Չափ	Կարիքը	Նյութատեխնիկական բազան	Դիդակտիկ նյութեր	Կարիքը
Լաբորատորիաներ, Կաբինետներ և դահլիճներ	Տարածքը /քմ/	Վերանորոգման կարիքը	Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները և արագաները	Ուսումնական, ուսումնադիդակտիկ նյութեր	Լրացուցիչ գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը
Դասասենյակներ 12	52,5-11դ. 26,5	Վերանորոգման կարիք ունեն 7 դասասենյակները	146 սեղան, 12 նստարան, 12 պահարան, փափուկ աթոռ		Շերտավարա գույրների կարիք 6 դասասենյակում
Լաբորատորիա	20	Վերանորոգված	Առկա են ֆիզիկայի անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներ, արդի պահանջներին անհամապատասխան քիմիայի և կենսաբանության նյութեր և սարքավորումներ	-	Քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության սարքավորումներ, պարագաներ, նյութեր:
Ռազմագիտության պահեստ	11	Վերանորոգման կարիք	Պատգարակ-4 Հակազագ-10 Օզեկա-6 Օդամղիչ հրացան-1 ԱԿ-74 ավտոմատ-1 Օդաճնշիչ զենք-	Պաստառ-10	Էլեկտրոնայիկ հրաձգարան

			7ջողով, 4,5մմ «ՄՌ512» -1	
Համակարգչային դասասենյակ	62	Հիմնանորոգման կարիք	Համակարգիչ -9, որից աշխատող -4, Էլեկտրոնային գրատախտակ-1, Պլանշետ-6 Պրոեկտոր-1 Ձայնարկիչ-2 Պահարան-1 Աշակերտական սեղան, նստարան-12 Գրասեղան-1 Փափուկ աթոռ-1	Նոր սերնդի համակարգիչներ
<<Արմաթ>>ին ժեներական լաբորատորիա	35	Վերանորոգված	«Այգեստան 2» միևնույն համակարգիչ, հավաքածու (մոնիտոր, ստեղնաշար, մկնիկ, երկարացման լար, HDMI մալուխ, ծրագրային ապահովում)-5 Համակարգիչ (մոնիտոր, ստեղնաշար, մկնիկ, երկարացման լար)-3 Եռաչափ տպիչ-1 CNC շաղափային և լազերային հաստոց /փոշեկուլ/-1 Ռոբոտաշինութան համար նախատեսված ուսումնական հավաքածու և ավտոմատացման	

			հավաքածու-1 Համակարգչային սեղան-8 Համակարգչային աթոռ-16		
Գրադարան	70,2	Հիմնանո րոգման կարիք	Գեղարվեստական գրքեր-2036 Տեղեկատվական գրքեր-43 Հանրագիտարաններ -43 Ուսումնամեթոդ ական-141 Ատլասներ-57 Դասագրքեր- Գրասեղան-2 Աթոռ-2 Ընթերցանության սեղան-3 Նստարան-4 Շախմատի սեղան-12 Աթոռ-24 Պահարան /փայտե/-1 Պահարան /երկաթե/-8	Պաստ առ ներ Գրողնե րի նկարնե ր -2տ	Պահարանն եր, համակարգի չ, նոր գրականութ յուն
Ուսուցչանոց	27	Արտաքին հարդար ման աշխատանքներ ը կատարվ ած	Գրասեղաններ-7 Աթոռ-12 Համակարգիչ-1 Տպիչ սարք-1 Բազկաթոռ-1 Պահարան-3		
Սանհանգույց/ տղաների աղջիկների	Յուր. 8	Հիմնանո րոգված	Լվացարան-4		
Տնօրենի սենյակ	37	Հիմնանո րոգման կարիք	Համակարգիչ-1 Տպիչ սարք-1		

			Գրասեղան-1 Խորհրդակցություններ ի սեղան-1 Պահարան-3 Աթոռ-4 Բազկաթոռ-1 Չիրկիզվող պահարան-1		
Ընդունարան	20	Հիմնական րոգման կարիք	Համակարգիչ-2 Տպիչ սարք-1 Պահարան-3 Չիրկիզվող պահարան-1 Գրասեղան-3 Աթոռ-3		
Հանդերձարան	Յուր2 0	Հիմնական րոգված	Պահարան- Յուր. 4 Նստարան- Յուր. 1		
Ուսուցիչների սանհանգույց	2,70	Հիմնական րոգված	Առկա է անհրաժեշտ սարքեր և սարքավորումներ		
Մարզադահլիճ	170	Վերանոր ոգված	Գնդակ-12 Թենիսի դաշտ-2 Բարձրացատկի հավաքածու-1 Մարմնամարզական օղակներ-12 Վոլեյբոլի ցանց-2 Ցատկապարան-8 Նիզակ-4 Նռնակ-5 Սկավառակ-3 Փոքր նետման գնդակ-10 Մատրաս-6 Մարմնամարզական գերան-1 Մագլցման պարան-2	-	-

			Մարգապատ-5 Բոսկետրոլի ցանց-2 Փայտե նստարան-6 Կրակմարիչ-1		
Խոհանոց	18	Հիմնանո րոգված	Չժանգոտող մետաղից դարակաշար-2 Չժանգոտող մետաղից սեղան -2 Սառնարան-1 Էլեկտրական վառարան 4 այրիչով, ջեռոցով-1 Էլեկտրական վառարան 1 բաժանմուկքով-1 Լվացարան, չորանոցով-1 Ջրատաքացուցիչ-1 Կշեռք-1 Ջեռոց-1 Բաժակներ-95 Ափսե-95 Պատառաքաղ-95 Գդալ-95 Կաթսա-6 Թերմոս 10լ-1 Օդաքար2-1		
Ճաշարան	18	Հիմնանո րոգված	Սեղան-5 Աթոռ /երկտեղանի/ - 20 Աթոռ/մեկ տեղանի/ - 10		

Արհեստանոց	57	Վերանորոգման կարիք	Հաստոց-5 Էլ. ֆուգան սղոց-1 Փայտամշակման խառատային հաստոց-1 Փայտամշակման դազգահ-5 Էլ. սրաքար-2 Կրակմարիչ-1		Նոր սերնդի սարքեր, սարքավորումներ, գործիքներ, կարի մեքենաներ
Հանդիսությունների սրահ	105	Հիմնանորոգման կարիք	Դաշնամուր-1 Նստարան-26 Վարագույր-64,1 Ամբիոն-1 Կրակմարիչ-1		Փափուկ աթոռներ
Մառան /Պահեստ/	18	Հիմնանորոգված	Չժանգոտող մետաղից սեղան -1 Սառնարան-1 Ջրատաքացուցիչ-1 Պահարան-1 Չժանգոտող մետաղից դարակաշար-1 Գազօջախ-1		
Միջանցքներ 1-ին մասնաշենք, 1-ին և 2-րդ հարկ	176	Հիմնանորոգման կարիք	Կրակմարիչ-4 Հրշեջ վահանակ-1		
Միջանցք 1-ին և 2-րդ մասնաշենքերը կապող	111	վերանորոգված	Լվացարան-4 Ձեռքերը չորացնելու սարք-2 Կրակմարիչ-1		

3. Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները

Չամաձայն ուսումնական հաստատության կանոնադրության⁴-րդ գլխի 32 կետի դպրոցում ձևավորվել է կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ :

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից: Կառավարման խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են նաև արտահերթ նիստեր: Խորհրդի նիստերը արձանագրվում են և ներկայացվում հրապարակման դպրոցի պաշտոնական կայքում: Խորհուրդը տնօրենի գործունեության նկատմամբ իրականացրել է ընթացիկ վերահսկողություն՝ քննարկել է զարգացման ծրագրի հաշվետվություններն ու արդյունքները: Խորհուրդը հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման կարգը: Տնօրենի ներկայացմամբ կառավարման խորհուրդը քննարկել է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը տարիֆիկացիոն ցուցակները, հավանության է արժանացրել և ներկայացրել լիազոր մարմնի հաստատմանը: Խորհուրդը յուրաքանչյուր հաշվետու տարվա ընթացքում քննարկում է դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական

գործունեության, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին խորհուրդն իր կազմից անդամներ է առաջադրում ներքին գնահատման աշխատանքներին մասնակցելու: Խորհուրդը աջակցում է հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, առնվազն երկու անգամ լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն: Լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան: 2021թ-ին խորհուրդն առաջարկություն է ներկայացրել լիազոր մարմին հաստատության տանիքի վերանորոգման համար: 2022թ-ին առաջարկություն է ներկայացրել լիազոր մարմին մարզագույքի ձեռքբերման համար: Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերին խորհուրդը քննարկել է բյուջեի նախագիծը, առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթեթերը: Բյուջեի նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացրած քաղաքացիները (ծնողներ, աշակերտներ, մանկավարժներ) հրավիրվել են բյուջեի պլանավորման համար կազմակերպված նիստերին՝ իրենց ներկայացրած առաջարկությունների մասով քննարկումների և պարզաբանումներ ստանալու նպատակով: Խորհուրդը բյուջետային պարտավորությունների կատարման նպատակով իրականացրել է վերահսկողություն բյուջեի կազմման, քննարկման և կատարման

գործընթացների նկատմամբ: Խորհրդի պահանջով տնօրենի կողմից ներկայացվել է բյուջեի կատարման մասին կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, որոնք պարունակում են`

1. տեղեկություններ հաշվետու տարում դպրոցի բյուջեի մուտքերի և ելքերի մասին
2. տեղեկություններ հաշվետու տարում դպրոցի բյուջեի կատարված ծախսերի ուղղությունների ու չափերի մասին:

Տնօրենը յուրաքանչյուր բյուջետային տարի ավարտվելուց հետո մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 15-ը բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներկայացրել է խորհուրդ:

Կառավարման խորհուրդը յուրաքանչյուր կիսամյակում ծնողական, աշակերտական խորհուրդների և մանկավարժների հետ կազմակերպում է համատեղ քննարկումներ, կլոր սեղաններ, զրույցներ դպրոցի գործունեության, իրականացված և իրականացվող աշխատանքների, առկա խնդիրների և դրանց լուծման ուղիների շուրջ:

Մանկավարժական խորհուրդ

Ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի առաջին նիստում, տնօրենի հրամանով:

Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր:

Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է դպրոցի տնօրենը:

Մանկավարժական խորհուրդը քննարկել է.

1. Հանրակրթական ծրագրերի իրագործման հարցերը` սովորողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի և առողջությանը համապատասխան,
2. դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը,
3. սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը,
4. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը,

5. ուսուցման բովանդակության սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների ձևավորման հարցեր:

Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել

1. Դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին,
2. սովորողների դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքեր տալու մասին,
3. սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրերով պարգևատրելու մասին,
4. որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու մասին,
5. բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի մասին,
6. սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու մասին,
7. շրջանավարտին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու,
8. դպրոցի ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին,
9. դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին:

Առարկայական մեթոդական միավորումներ

Դպրոցում գործում են մեթոդամիավորումներ՝

1. Պատմաբանասիրական և լեզուների մ/մ
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մ/մ
3. Տարրական դասարանների և խառը առարկաների մ/մ

Մեթոդամիավորումները աշխատում են ըստ իրենց գործառույթների:

1. Մեթոդափափորումը քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը,
2. քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը
- 3/ նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը
- 4/ տարակարգ չունեցող սկսնակ ուսուցչին նախապատրաստում է ատեստավորման
- 5/ կազմակերպում է մանկավարժական, մեթոդական խորհրդատվություններ, կազմակերպում է սեմինարներ,
- 6/ կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություններ ներկայացնում տնօրենին,
- 7/ մանկավարժական խորհրդի քննարկման է ներկայացնում ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություններ:

Ծնողական խորհուրդ

Ծնողական խորհուրդը բաղկացած է 12 անդամից: Ծնողական խորհուրդը համագործակցում է տնօրինության և աշակերտական խորհուրդի հետ, նպաստում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքերին: Ծնողական խորհուրդը ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում տնօրինությանը: Կազմակերպում է եքսկուրսիաներ , ճանաչողական այցեր:

Ծնողական խորհուրդը աջակցում է դպրոցի ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին: Ծնողները տեղեկացված են դպրոցի առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից:

Աշակերտական խորհուրդ

Դպրոցի աշակերտական խորհուրդը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ընտրությունների միջոցով: Դպրոցի աշակերտական խորհուրդը կազմված է 12 անդամից : Աշակերտական խորհուրդը գործում է ժողովարդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Աշակերտական խորհուրդը աջակցում է ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին:

Աշակերտական խորհուրդը միջոցներ է ձեռնարկում սովորողների միջև ծագած վեճերին, խնդիրներին լուծում տալու նպատակով:

Աշակերտական խորհուրդը կազմակերպում է շաբաթօրյակներ, մշակութային և մարզական միջոցառումներ:

4. Դպրոցի համագործակցությունը համայնքի, կրթության

կառավարման մարմինների, շահառու

կազմակերպությունների հետ

Հաստատությունն համագործակցում է կրթության պետական կառավարման մարմնի և այլ շահառու կազմակերպությունների հետ

- Հաստատությունը իրականացնում է կրթության կառավարման մարմնի հրամաններն ու հրահանգները:
- Կրթության պետական կառավարման մարմնի կողմից երաշխավորվել է «Ազգային երգ ու պար» խմբակի ծրագիրը:
- Դպրոցը համագործակցում է ԿՉՆԱԿ հիմնադրամի, «ԻՄ ԴՊՐՈՑԻ», «Ձևափոխվող կրթության», «EduArmenia» ի , Ինտերակտիվ հիմնադրամի, ԿՏԱԿ-ի, Ագրարային համալսարանի հետ, Տարածքային ոստիկանության անչափահասների բաժնի հետ, ԱԻՆ փրկարարական ծառայության հետ, Աշտարակի համայնքային գրադարանի հետ, Նոր Երզնկա բնակավայրի Մշակույթի տան և գրադարանի հետ, « Երզնկա համայնքային զարգացման երիտասարդական միության», «Մանկապատանեական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ, «Կոմանդոս» ռազմամարզական ակումբի հետ, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հետ:

Դպրոցն ակտիվորեն համագործակցում է համայնքի հետ:

Ծնողների, ընտանիքի և համայնքի մասնակցությունը համարվում է հաստատության գործունեության բարելավման կարևոր գործոն: Մասնակցության բարձրացման կարևոր գործոններից է դպրոցի կողմից իրականացված քայլերը, որոնք ուղղված են հաստատության տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև համայնքային այլ կառույցների հետ համագործակցության ամրապնդմանը:

2019, 2020, 2021 թթ-ին ավագ դասարանների սովորողները մասնակցել են ավագանու Նիստերին՝ բյուջեի քննարկմանը: Որպես համայնքի հիմնախնդիր սովորողների կողմից համայնքի ղեկավարին ներկայացվել է մանկական այգու խաղահրապարակի

անհրաժեշտությունը, որի արդյունքում 2021թ-ին ավագանու որոշումով բնակավայրում կառուցվել է մանկական խաղահրապարակ և զբոսայգի:

2022թ-ին աշակերտական խորհրդի կողմից համայնքի ղեկավարին որպես հիմնախնդիր է ներկայացվել հանրային տրանսպորտի բացակայությունը, որի պատճառով բազմաթիվ երեխաներ զրկված են մարզական և մշակութային արտադարոցական խմբակներին մասնակցելու իրավունքից: Համայնքի ղեկավարը խոստացավ, որ մինչև նոր ուսումնական տարին կլուծի ներկայացված խնդիրը:

Հաստատության սովորողներն ակտիվորեն մասնակցում են բնակավայրի մշակույթի տանը գործող արտադասարանական խմբակների՝ պարի, դիոլի, նկարչության, շախմատի, հելլոնագործության:

Հաստատությունն ակտիվորեն համագործակցում է

- մարզային և համայնքային գրադարանի հետ՝ կազմակերպել են գրքերի քննարկումներ, գրողներին նվիրված ցերեկույթներ
- մանկապարտեզի հետ՝ կազմակերպել են սովորողները տիկնիկային ներկայացումներ, մարզախաղեր մանուկների համար
- բնակավայրի բուժհաստատության հետ՝ բժշկի և բուժքույրերի կողմից ավագ դասարանների սովորողների հետ իրականացվել են զրույցներ, սեմինարներ առողջ ապրելակերպի մասին, ծխախոտի, ակոհոլի օգտագործման և դրանց հետևանքների մասին: 1-8-րդ դասարանների սովորողների և նրանց ծնողների հետ իրականացվել են զրույցներ երեխաների ճիշտ ռեժիմի, առողջ սննդակարգի և ապրելակերպի, վնասակար սովորությունների մասին:

Համայնքի բնակչությունն իր մասնակցությունն է ցուցաբերում հաստատության գործունեությանը:

Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնական-լսարանական բազայի համալրման աշխատանքներին համայնքի մասնակցությունը, մասնակցության ձևը և այդ գործում կատարված ներդրումները.

Կատարած աշխատանքը	Տարեթիվը	Չափը	Կատարող
5 դասասենյակի կոսմետիկ վերանորոգում	2019թ. դեկտեմբեր, 202թ. հունվար	300000դր	Աշխատանքն իրականացվել է համայնքի երիտասարդության կողմից

Լաբորատորիայի կոսմետիկ վերանորոգում	2018թ.	100000դր	Աշխատանքն իրականացվել է երիտասարդների կողմից
Բակի կանաչապատում	2021թ.	30000դր	Ճնողների կողմից
«Արմաթ» ռոբոտաշինության սարքավորումների ձեռքբերում	2021թ.	5000000 դր.	Երզնկայի երիտասարդական միության կողմից
1 դասասենյակի կոսմետիկ վերանորոգում	2023թ.	30000դր	Ճնողների կողմից
1 դաշնամուր	2022թ.	25000դր	Ճնողի կողմից
Գրքերի նվիրատվություն	2022թ, 2021թ	70000դր	Ճնողների կողմից

Հաստատության սովորողներն ու մանկավարժներն ակտիվորեն մասնակցում են համայնքային միջոցառումներին

Գործունեության տեսակ	Ժամանակ	Մասնակիցների թիվ
Շաբաթօրյակներ	Յուրաքանչյուր տարվա ընթացքում 3-4 անգամ	110 սովորող, բոլոր աշխատողները
Ճառատունկ	Յուրաքանչյուր տարի, աշուն-գարուն	25-30 սովորող Բոլոր աշխատողները
Արցախյան պատերազմում զոհվածների հուշահամալիրի խնամք /ծաղիկների, ծառերի տնկում, մաքրում/	Գարուն, աշուն 3-4 անգամ	25 սովորող 5-6 ուսուցիչ
«Անահիտ» հուշարձանի խնամք	Տարվա ընթացքում	20-25 սովորող

Դպրոցի սովորողների կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումներ

Գործունեության տեսակ	Ժամանակ	Մասնակիցների թիվ
----------------------	---------	------------------

Անկախության տոնին նվիրված միջոցառում	Սեպտեմբերի 21	Բոլոր սովորողները, Բոլոր ուսուցիչները
Հայոց բանակի տոնին նվիրված միջոցառումներ	Հունվարի 28	Բոլոր սովորողները, Բոլոր ուսուցիչները
Ծանրոց զինվորին	Հունվարի 28	Բոլոր սովորողները, Բոլոր ուսուցիչները, ծնողները
Խնկարկում՝ Եղեռնի զոհերի և Արցախյան զոհերի հիշատակին	Ապրիլի 24	Բոլոր սովորողները, Բոլոր ուսուցիչները
Ընտանիքի օր	Մայիսի 15	30 սովորող

Համայնքի բնակիչներն օգտվում է դպրոցի մարզադահլիճից և մարզադաշտից

Գործունեության տեսակ	Ժամանակ	Մասնակիցների թիվ	Լրացուցիչ տեղեկություններ
Մարզախաղերի կազմակերպում մարզադահլիճում	Ամիսը 3-4 անգամ	40-50	Մրցույթներ են կազմակերպել Երևանի կամ այլ մարզերի թիմերի հետ, զբաղեցրել 2-րդ մրցանակային տեղ՝ վոլեյբոլից
Չոհված ազատամարտիկի ծննդյան 30ամյակին նվիրված ֆուտբոլի հուշամրցաշարի կազմակերպում	2023թ. Մայիսի 1	Նոր Երզնկայի ֆուտբոլի թիմ, Խաղապահների թիմ, Երևանի ֆուտբոլի թիմ	

Հաստատության համագործակցությունը ծնողների հետ

Մասնակցության առաջնային և կարևորագույն ձևն է՝ ծնողների և ընտանիքի կողմից երեխայի հանդեպ ուշադրությունը, հոգածությունը և խնամքը, ներառյալ դպրոց երեխայի կանոնավոր հաճախումն ապահովելը:

Հաստատություն հաճախող տարրական դպրոցի սովորողների ծնողներն ուշադիր են և հետևողական, բոլոր սովորողները դպրոց են հաճախում խնամված, անհրաժեշտ գրենական պիտույքներով և դասագրքերով, տնային հանձնարարությունները կատարած: Հաճախումների ցուցանիշը բարձր է, բացակայությունները հիմնականում

հիվանդության պատճառով են լինում:Ծնողներն ակտիվորեն մասնակցում են ծնողական ժողովներին,բաց դասերին,արտադասարանական միջոցառումներին,սննդի կազմակերպման աշխատանքներին:

Հիմնական դպրոցի՝ 5-9-րդ դասարանների սովորողների ծնողների 10-15% ավելի քիչ հետևողական է լինում երեխայի հազուստին,սննդին,տնային հանձնարարությունների կատարմանը,որոնց պատճառներն ըստ անանուն հարցումների տարբեր են՝

1. ծնողներն աշխատանքից ուշ են տուն վերադառնում
2. ծնողների գիտելիքները չեն բավարարում երեխային աջակցելու համար
3. պարզապես անտարբեր են երեխայի կրթության և դաստիարակության նկատմամբ
4. չեն կարևորում երեխայի կանոնավոր հաճախումները դպրոց :

Դասալսումներ իրականացնում են քիչ թվով ծնողներ:

Ավագ դպրոցի(10-12-րդ)սովորողների ծնողներից շատերը պասիվ են մասնակցում ծնողական ժողովներին,դասալսումներին,բաց դասերին:Սովորողների դասապատրաստմանը և հաճախումներին ծնողների մի մասը չեն կարողանում վերահսկել:Ավագ դասարանների տղաներից շատերը հաճախակի բացակայում են,պասիվ են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:Հաստատությունում ամենօրյա հաճախումների ստուգումներ են իրականացվում և ստուգվում բացակայությունների պատճառները,կանխվում անհարկի բացակայությունները:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին շնորհակալագրերով են պարգևատրվում հաստատության աշխատանքներին,կառավարմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողները:

5. Դպրոցի ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Ուսումնական հաստատության սովորողները և մանկավարժները և վարչական կազմը օգտվում են գրադարանի ծառայությունից, անհրաժեշտության դեպքում օգտվում են

ընթերցասարահից: Գրադարանում կազմակերպվում են գրքերի քննարկումներ, ցերեկույթներ, գրողներին նվիրված միջոցառումներ: Բոլոր սովորողները ապահովված են դասագրքերով: Գրադարանը հագեցած չէ նոր գույքով և սարքավորումներով, նոր ուսումնաօժանդակ գրականությամբ: Հաստատությունը չունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ռազմագիտության և այլ հատուկ ուսումնական դասասենյակներ, այդ թվում՝ արտադպրոցական կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման համար/լուսանկարչական, նկարչական, երաժշտական և այլն/, որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնական սյուրսերով և ուսումնադիտակտիկ սյուրսերով: Երկար դասամիջոցներին 1-4-րդ դասարանների սովորողները սնվում են ճաշարանում: Դասամիջոցներին կազմակերպվում են շարժախաղեր գնդակներով, օղակներով և ցատկապարաններով: Չորեքշաբթի և ուրբաթ օրերին կազմակերպվում են մշակույթային միջոցառումներ՝ ազգային երգ ու պար, ասմունք: Ավագ և միջին դասարանների աշակերտները երկար դասամիջոցներին կամ դասերի ավարտին թենիս են խաղում: Դպրոցում կազմակերպվում են արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ, համերգային ծրագրեր, վիկտորինաներ, ռազմամարզական խաղեր, վոլեյբոլի, բասկետբոլի, թենիսի մրցույթներ, նկարչության մրցույթներ, բեմականացումներ: Դպրոցի սովորողները մասնակցում են տարբեր արտադասարանական և արտադպրոցական խմբակների.

«Ազգային երգ ու պար» -ի խմբակ - 25 աշակերտ

Մարզական խմբակներ-30 աշակերտ

Դաշնամուրի խմբակ-7 աշակերտ

Պարի խմբակ-40 աշակերտ

Երգի խմբակ-7 աշակերտ

Նկարչության խմբակ- 10 աշակերտ

Շախմատի խմբակ-12 աշակերտ

Լեռնային խմբակ-30 աշակերտ

«Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ռոբոտաշինության խմբակ-22 աշակերտ

Կազմակերպվում են այցելություններ մշակույթի օջախներ՝ 8 այցելություն (112 աշակերտ)

Թանգարան-12 այցելություն /127 աշակերտ/

Արշավներ-6 /90 աշակերտ/

Էքսկուրսիաներ-5 /130 աշակերտ/

5. 1 Ներառական կրթության և հավասարության ապահովումը հաստատությունում

Ներառական կրթությունը ենթադրում է դպրոցում այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում, որոնցում բոլոր երեխաները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից ունեն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ:

Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է դպրոցի զարգացման ծրագրում.

Դպրոցում բոլոր երեխաների համար

1. ստեղծված են հավասար պայմաններ դպրոց ընդունվելու և սովորելու համար՝անկախ նրանց կարիքներից,կարողություններից և սոցիալական անապահովության աստիճանից:

2. ապահովվում է բոլոր սովորողների հավասար մասնակցություն ուսումնառության գործընթացին՝ նրանց կարիքներից,կարողություններից և սոցիալական անապահովության աստիճանից անկախ.

3. ապահովվում է բոլոր սովորողների համար կրթության արդյունքներին հասնելու և առաջադիմության ցանկալի մակարդակը նրանց կարիքներից,կարողություններից և սոցիալական անապահովության աստիճանից անկախ:

- Դպրոցում իրականացվել են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ
- 2020 թ-ին 8 ուսուցիչներ, 2 վարչական աշխատողներ
- 2021թ-ին՝ 20 մանկավարժներ, 2 վարչական աշխատողներ
- 2022թ-ին՝ 21 մանկավարժներ ,2 վարչական աշխատողներ:
- Դպրոցն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով օժտված տեղակալ:

- Դպրոցն ունի ԿԱՊԿ ունեցող սովորողներին աջակցող ուսուցչի օգնականներ՝ 2 օգնական/ 1,5 դրույք/
- Դպրոցը համագործակցում է տարածքային հոգեբանամանկավարժական կենտրոնի հետ, աջակցություն է տրամադրվում դպրոցի ԿԱՊԿ ունեցող սովորողներին սահմանված ժամանակացույցով, անհրաժեշտության դեպքում իրականացնում են ծնողների և ուսուցիչների խորհրդատվություններ:
- ԿԱՊԿ ունեցող սովորողներն ապահովված են դասագրքերով և գրենական պիտույքներով:
- Դպրոցում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները:
- Դպրոցում սովորում են ԿԱՊԿ ունեցող 4 աշակերտներ, որոնք հավասարապես մասնակցում են դպրոցի և դասարանի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի:
- Բոլոր ԿԱՊԿ ունեցող սովորողները մասնակցում են արտադասարանական աշխատանքներին:
- Դպրոցի սովորողները գիտակցում են ԿԱՊԿ ունեցող իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը և օգնում են փոխել դրանք.

- 1/ սովորողներին մասնակից են դարձրել համադպրոցական 4 միջոցառումների,
- 2/ մասնակից են դարձրել մարզական խաղերին, վազքի մարաթոնին, սպորտլանդիային /6 միջոցառման/

3/մասնակից են դարձրել էքսկուրսիաներին /8/,
 թանգարաններ/5/, կինոթատրոններ այցելություններին/6/

4/մասնակից են դարձրել շաբաթօրյակներին/4/:

Չաստատությունում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը.

